Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության
տեսչական մարմնի ղեկավարի
2026 թվականի հունիսի «4»-ի N 9-Լ հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԿՈՆԿՐԵՏ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԿՏՐՈՒԿ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) հանրակրթության և արտադպրոցական կրթության վերահսկողության վարչության միջնակարգ կրթության վերահսկողության բաժնի (այսուհետ՝ բաժնի) կողմից ստորև նշված հարցերի կանոնակարգման համար նպատակահարմար է ներգրավել փորձագետ (այսուհետ՝ Փորձագետ):

Փորձագետը՝

1. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատությունում (անկախ հանրակրթական պետական ծրագիրն իրականացնող կազմակերպության կազմակերպական-իրավական ձևից) իրականացվող կրթական ծրագրերի՝ տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրերի (հանրակրթական պետական ծրագրերի) պահանջներին, ներառյալ ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքին և ուսումնական պլանի կազմման կանոններին, առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին, տարեկան ուսումնական ժամանակացույցներին, դասացուցակներին, երաշխավորված դասագրքերի ցանկին համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.
2. Իրականացնում է հանրակրթական այլընտրանքային, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային հիմնական ծրագրերի՝ հանրակրթական ծրագրերին, պետական չափորոշիչների պարտադիր պահանջներին, տվյալ ծրագրի հաստատման կարգին համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.
3. Իրականացնում է հանրակրթության յուրաքանչյուր կրթական ծրագրի մակարդակում փոխադրական (այդ թվում՝ էքստեռն), ավարտական, պետական ավարտական քննությունների (ստուգման) անցկացման ընթացակարգերի նկատմամբ վերահսկողություն.
4. Իրականացնում է պետական հանրակրթական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման՝ սահմանված չափանիշներին (կարգին) համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.

5. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատություն ընդգրկված և պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաներին բացահայտելու և հանրակրթական ուսումնական հաստատություն ընդգրկելու գործողություններ, այդ թվում՝ սահմանված ժամկետից ուշ ընդգրկվող երեխաների կրթություն կազմակերպելու գործընթացի նկատմամբ վերահսկողություն.

6. Իրականացնում է ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների գործունեության՝ լիազոր մարմնի երաշխավորած պայմաններին համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.

7. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ուսումնառությունը դասարանային (խմբային), անհատական, տնային ուսուցման կամ հեռավար (դիստանցիոն) կրթության միջոցով ապահովելու, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններն ապահովելու գործընթացների նկատմամբ վերահսկողություն.

8. Իրականացնում է հանրակրթական ծրագրերից բխող ուսումնական նյութերի, դասագրքերի, ուսումնառության նյութերի, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկների, ուսումնադիտողական նյութի առկայության նկատմամբ վերահսկողություն.

9. Իրականացնում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին օրենքով և ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությամբ վերապահված պարտականությունների կատարման իրավաչափության նկատմամբ վերահսկողություն.

10. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների թափուր տեղի համալրման (մրցույթի անցկացման, ընտրության կամ նշանակման) գործընթացների նկատմամբ վերահսկողություն.

11. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնների՝ սահմանված անվանացանկին, զբաղեցրած պաշտոնի նկարագրերին համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.

12. Իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածվող փաստաթղթերի՝ սահմանված անվանացանկին և ձևերին համապատասխանության, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության ընթացքում դրանց վարման կանոնների ապահովման նկատմամբ վերահսկողություն.

13. Իրականացնում է լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների հավաստիության նկատմամբ վերահսկողություն.

14. Իրականացնում է ղեկավար և մանկավարժական աշխատողների ընտրության, հավաստագրման, նշանակման, ինչպես նաև վերապատրաստման, ատեստավորման,

տարակարգի ներկայացման և շնորհման գործընթացների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանության նկատմամբ վերահսկողություն.

15. Իրականացնում է Բաժնի պետին հանրակրթության ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի պահանջների խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ առաջարկների ներկայացման աշխատանքները.

16. Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված՝ հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրության կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների, ուսումնական հաստատություններին նրանց իրավունքների և պարտականությունների մասին իրազեկման, խորհրդատվության, կանխարգելիչ, մասնագիտական, մեթոդական աջակցության իրականացման աշխատանքները.

17. Իրականացնում է Բաժնի պետին ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաների գործողությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկների ներկայացման աշխատանքները.

18. Իրականացնում է Բաժնի պետին հանրակրթության ոլորտում վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվությունը այլ տեսչական մարմիններ փոխանցելու և այլ մարմիններից վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու աշխատանքները.

19. Իրականացնում է հանրակրթության ոլորտում պետական վերահսկողության գործընթացների՝ ստուգումների, տեսչավորումների, դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունավետ իրականացման նպատակով ստուգաթերթերի, ձևաթղթերի, սյունակաշարերի, հավելվածների, հարցաշարերի, հարցաթերթիկների և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքները.

20. Իրականացնում է Բաժնի պետին հանրակրթության զարգացմանը նպաստող առաջարկություն ներկայացնելու աշխատանքները.

21. Իրականացնում է հանրակրթության ոլորտում պետական վերահսկողության գործընթացների՝ ստուգումների, տեսչավորումների, դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հաշվետվությունների, միջնորդագրերի, հանձնարարականների, կարգադրագրերի, որոշումների, ակտերի, եզրակացությունների, տեղեկանքների, արձանագրությունների, զեկուցագրերի և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Փորձագետը սույն ծրագրով կատարման ենթակա աշխատանքներն իրականացնում է 1 (մեկ) տարի ժամկետով:

Փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում:

Փորձագետը սույն ծրագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ երկու ամիսը մեկ և ամփոփիչ փուլում անմիջական ղեկավարին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

Փորձագետի աշխատանքների գնահատման համար հիմք են հանդիսանում վերջինիս կողմից ներկայացված հաշվետվությունները:

Սույն ծրագրի իրականացման համար փորձագետը պետք է ունենա՝

Կրթություն, որակավորման աստիճանը.

Բարձրագույն կրթություն

Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը.

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Օրենքների իմացությունը.

- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, «Կրթության մասին» ՀՀ օրենք, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, «Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» ՀՀ օրենք: